


A 502

8515

շ-49

ԵԴԱԾՈՂ ԴԵ ԱՄԻՉԻՍ

# ԳԱՅՔ ԱԶԱՏՈՂ ԱՌՁԻԿՈ



Թարգմ. Ա. Ա.



ՎԻՃՈՒԵԼ  
ԻНСТИՏՈՒ  
ՊԱՏՈԽԵԴԵՆԻ  
Ակադեմիա  
СССР

Պատպահության  
Եվելքածառ սպարան Ա. Էջմիածնի  
1913

8515.  
շ-49



## ԳՆԱՅԻ ԱԶԱՏՈՂ ԱՂՋԻԿ.

Փոքրիկ Պերինայի հայրը երկա-  
թուղու գծի պահապան էր:

Երեխան փոքր հասակից արդէն  
սովորել էր գնացքների շվոցին և դը-  
ղբըդոցին: Նա միշտ տեսնում էր, թէ  
ինչպէս իր հայրը օրը մի քանի անգամ  
գնացքներին հանդիպելու համար ճա-  
նապարհն էր դուրս գալիս, և հետը  
վերցնում էր ցերեկը զրօշակ, իսկ զի-  
շերը վառած լապտեր:

Պերինան ընդելացել էր երկու մեծ  
ու վառուող աչքերով այդ հսկային,  
որը դէպի իրենց տնակը այնպիսի ահ-  
ռելի արագութեամբ և սարսափելի հե-  
տոցով էր թոշուն, որ կարծես թէ, ու-  
զում էր կուլ տալ տնակը:

Երբ Պերիսան դեռ շատ էր փոքր,  
վախենում էր այդ հրեշից. Երկիւզով  
սղմում էր մօրը, Երբ նա ազգանիշ  
լապտերը ձեռին ամուսնու փոխարէն  
էր դուրս գալիս:

Բայց յետոյ էլ չէր վախենում  
գնացքից. և ինչու պէտք է վախենար,  
քանի որ ամեն օր հօր կամ մօր ձեռ-  
քը բռնած դուրս էր վազում նրան հան-  
գիտելու. Նա տեսնում էր, թէ ինչպէս  
այդ հսկան երեք կամ չորս անդամ  
շունչ քաշելու համար փոքր ինչ կանգ  
էր առնում և նորից նեալով շարունա-  
կում իր երկար ճանապարհը:

Ո՞րտեղից էր գալիս, և ուր էր  
վաղումնորից այնպիսի արագութեամբ:

Ո՞ւր էր տանում մէջը լիքը սարդ-  
կանց, մտածում էր Պեղիսան:


Ճանապարհորդներից մի քանիսը  
ժպտում էին պատուհանից և նայում  
երեխային, իսկ առ հետևում էր նրանց  
աջերով այնքան՝ մինչև որ բոլոր դէմ-  
քերը անյատանում էին, բոլոր կապոյտ  
գեղին և կանաչ վագոնները երկար սե-

օձի նման էին դառնում և արագ սովորով՝ բարակում և վերջապէս բոլորովին անյայտանում:

Պերինան շատ էր սիրում գնացք  
հանդիպելը. երբ լսում էր մեքենայի  
զբոքոցը, ուրախ դուրս էր վազում  
տնակից և մօտենում գծին. Այս վար-  
մունքի համար մայրը նրան մի երկու  
անգամ պատժեց, այնուհետեւ նա էլ չէր  
համարձակում մօտենալ գծին, թէեւ  
դեռ չէր հասկանում, թէ ինչու էր մայ-  
րը բարկանում: Բայց երբ Պերինան  
մեծացաւ և սկսեց հարեան գիւղի զբա-  
րոցը յաճախել, հասկացաւ շվացնող  
գնացքի վտանգը, ուստի ասում էր  
մօրը.

— Մի վախենայ, մայրիկ, ես հիմա փոքր չեմ, գնացքի տակ չեմ ընկնի:

Պերինան կամաց — կամաց սկսեց  
օդնել հօրը։ Նա այժմ զիտէ, որ գնաց-  
քն անցնելուց առաջ հայրը շըջում էր  
իր մասը, զիտում էր, արգեօք փշա-  
ցած չէ ճանապարհը, ամուլ է ան-



դունդի վրայի կամուրջը, և երբ ամեն  
ինչ կարգին էր գտնում, կանաչ դրօ-  
շակը ձեռքին կանգնում էր իր տեղը:  
Այդ կանաչ դրօշակը ցոյց էր տալիս,  
որ գծի վրայ ամեն ինչ լաւ է և գր-  
նացքը կարող է ազատ շարունակել իր  
ճանապարհը: Եթէ մի որևէ տեղ փո-  
թորկից և անձրևներից վնասուած էր  
լինում, հայրը կարմիր դրօշակը օդի  
մէջ շարժելով՝ կանգնեցնում էր զը-  
նացքը:

Քերինան ուշադրութեամբ դիտում  
էր այդ բոլորը և ուրախանում, որ կա-  
րող է վերջապէս օդնել հօրը:  
Նա միշտ ասում էր.

— Գնա, հայրիկ, դու ուրիշ գործ  
կունենաս, ես կը հանդիպեմ զնացքը:

— Իսկ դու չես մոռանալ, անու-  
շադիր չես լինիլ, հարցնում էր հայ-  
րը:

— Միթէ ես այժմ փոքրիկ եմ.  
Ե՞ որ մայրիկն էլ կը յիշեցնի ինձ:  
Եւ իրաւ, երեխան միշտ այնքան

ձշատապահ և ուշադիր էր, որ կարելի  
էր նրան վատահանալ:

Գնացքը մօտենալուց ասս լողի  
առաջ նա հպարտ և փայլուն դէմքով,  
դրօշակը ձեռին կանգնած էր լինում իր  
տեղում. քամին խաղում էր նրա ոսկե-  
գոյն գանգուրների հետ և փռում աշ-  
խոյժ ու խելօք դէմքի վրայ:

Այսպէս ուրախ և երջանիկ էին  
ապրում:

Բայց մի անգամ գիշերը, փոթոր-  
կի և ձիւնի ժամանակ, երբ հայրը դուրս  
եկաւ զնացքը հանդիպելու, սաստիկ  
մըսեց, թոքերի բորբոքում ստացաւ և  
պառկեց: Յուսահատուած մայրը չէր  
հեռանում հիւանդի անկողնից:

Գնացք հանդիպելու հոգու ամբող-  
ջովին ընկաւ Պերինայի վրայ:

Աղջիկը ուշադրութեամբ շրջում  
էր իրենց հողամասը, և հանդիպում էր  
աղղանշանով ամեն մի զնացքի:

Թէկ նրա սիրաը ճմլում էր ծա-  
նըր վշտից, բայց և այնպէս չէր մոռտ-

նում գնացքների գալու ժամանակը և  
մինչեւ անդամ զիշերները ինքն էր վեր  
կենում հանդիպելու:

Նա հանգստացնում էր հօրը, երբ  
սա յիշեցնում էր գնացքների գալու  
ժամերը: Երեխան շատ լաւ էր յիշում  
այդ ժամերը և բաց չէր թողնում ոչ  
մի գնացք:

Պերինայի հայրը մեռաւ: Զը կար  
մէկը, որ յիշեցնէր նրան գնացքի ժա-  
մերը, ուստի Պերինան դարձաւ աւելի  
ուշադիր:

— Մի լար, մայրիկ, ասում էր  
նա մօրը մի քանի օրից յետոյ.—չէ  
որ դու էլ կարող ես հիւանդանալ, և  
յետոյ, լաւ մտածիր, Բնչ կը լինի իմ  
և իմ եղբայր Լուիջինօի վիճակը:

— Է՞հ, աղջիկս, տիսուր պատաս-  
խանում էր մայրը,—սիրտս ցաւում է  
նուև այն պատճառով, որ այժմ մեզ  
դուրս կանեն մեր տնակից, իսկ ես  
այնպէս եմ սովորել նրան:

— Այս, ես էլ եմ սովորել մեր  
տնակին, պատասխանեց Պերինան:

— Բայց ինչու պէտք է հեռացը-  
նեն մեզ, մայրիկ. չէ որ ես հետեւում  
եմ գնացքներին. Երբ հայրիկը հիւանդ  
պառկած էր, ես ոչ մի գնացք բաց  
չեմ թողել. այժմ ես արդէն մեծ եմ  
և պահապանից վատ չեմ նայում ճա-  
նապարհին:

— Այս, բայց և այնպէս մեզ գուրս  
կանեն այստեղից և մեր տեղը կը նշա-  
նակեն ուրիշ պահապան:

Շատ չանցաւ, եկաւ երկաթուղու  
վերատեսուչը:

Պերինայի մայրը խնդրում էր թող-  
նել իրեն տնակում:

— Արդէն մի ամիս է անցել և  
մինչեւ այժմ ոչ մի անկանոն գէպք չի  
պատահել, ասում էր նա.—ես աղջկաս  
հետ կը կատարեմ ամեն ինչ, իսկ մի  
քանի տարուց յետոյ աղաս կը մեծանայ  
և կը ստանձնի հօր պաշտօնը:

— Զափազանց մեծ է պատասխա-  
նատութիւնը, ասաց վերատեսուչը,  
որը սակայն խղճում էր կնոջը:

— Միթէ կարելի է վստահանալ  
այսպիսի մի ծանր պաշտօն մի կնոջ և  
մի փոքրիկ աղջկայ:

— Բայց Պերինաս ոչնչով պակաս  
չէ պահապահից. նա անչափ խելօք և  
ուշադիր է: Կը տեսնէք, թէ ինչպէս  
բոլորը գոհ կը լինին մեզանից:

— Լաւ, որքան հնարաւոր է, ես կաշ-  
խատեմ, ասաց վերատեսուչը, բայց  
և այնպէս դժուար կը լինի առանց  
տղամարդու կառավարուել: Ես այնպէս  
կը ձեացնեմ, իբր չ՛ը դիտեմ, որ ձեր  
տղան դեռ շատ փոքր է, բայց նախա-  
գուշացնում եմ, որ դեռ հաստատ ո-  
չինչ չեմ կարող խոստանալ:

Խեղճ կինը մշտական սարսափի  
մէջ էր: Նա մտածում էր, որ իրեն  
դուրս կանեն այսպիսի յարմար անկիւ-  
նից, որից յետոյ ստիպուած կը լինի  
ողորմութիւն խնդրելու:

Այդ ժամանակամիջոցում Պերինան  
ուղղակի հրաշքներ էր գործում: Վա-  
զում էր դպրոց և ճիշտ ժամանակին  
վերադառնում իր պաշտօնատեղը:

Մի անգամ նոյեմբերի վերջերին  
սաստիկ փոթորիկ էր: Առաւօտից սկզ-  
սած ձիւն էր գալիս, իսկ երեկոյեան  
դէմ անտանելի ուժգին քամի էր բար-  
ձրացել:

Փոքրիկ լուիջինոն հիւանդ էր և  
մայրը չէր կարող հեռանալ մօտից:

Պերինան երկաթուզու գծի իր մա-  
սը դիտելուց յետոյ, նստել էր անկող-  
նու վրայ և սպասում էր զիշերուայ գր-  
նացքին: Յանկարծ մի ուժեղ դըզրոց  
լուսեց, որից ամբողջ տնակը դողաց:

— Այս լոնչ բան է, պէտք է գը-  
նալ և իմանալ պատճառը, ասաց Պե-  
րինան:

— Չէ որ դու նոր շրջեցիր քո  
հողամասը, ուր պիտի գնաս էս կէս  
գիշերին, այսպիսի վաս եղանակին,  
քեզ էլ մի բան կը պատահի:

— Սի, մայրիկ, շուտով գնացքը  
կը գայ, պէտք է նայել, թու մի վա-  
խենայ, ես սովոր եմ:

Փաթաթուելով իր ծածկոցի մէջ

և վերցնելով լապտերը, Պերինան արագ դուրս ելու անակից:

Հինգ ըսպէից յետոյ վերադարձաւ սաստիկ շփոթուած:

— Սարսափելի՛ է, կամուրջը փլել է, բացականչեց նա և շտապ վառեց կարմիր լապտերը և պատից ցած բերեց փչելու փողը \*):

— Աստուած իմ, Աստուած իմ, ինչ պիտի անես, հարցրեց մայրը սարսափած. — Չուտով գալու է ձեզլնթաց դնացքը, որը կանգ չի առնում և սաստիկ արագ է անցնում:

— Ես վառել եմ կարմիր լապտերը:

— Այսպիսի բուք բորանին լապտերի լոյսը չի նկատուիլ:

— Փողը կը փչեմ:

Զեն լսի, աղջիկս, ուժդ չի պատի, խոկ ինքդ էլ մի դժբախտութեան մէջ կընկնես:

— Աստծով կը լսեն, մայրիկ:

\* ) Փողը ձայն հանելու գործիք է:

Նորից վաթաթուելով իր ծածկոցի մէջ՝ Պերինան դուրս վագեց անակից, որպէս զի գնացքին դիմաւորէ:

Ցուրտ քամին սառցնում էր երեսայի երեսը և խանգարում վագելը. ձիւնը լցւում էր աչքերը, բայց Պերինան ոչ մի բանի ուշագրութիւն չէր դարձնում և միմիայն մտածում էր այն մասին, թէ մեքենավարը կըտեսնի՞ նրա ազդանշանը:

Շուտով լսուեց շոգեգնացքի շըվոցը:

Աղջկայ սիրու սկսեց ուժդին բարաբախել. Ակամայից ամբողջ մարմնով ցնցւում էր, երբ մտածում էր, որ մարդկանցով լիքը գնացքը անդունչը պէտք է ընկնի:

Գնացքը սկսեց երեալ . . .

Պերինան յուսահատ շարժում էր լապտերը և ամբողջ ուժով փչում փողը, բայց աւաղ, գնացքը նոյն արագութեամբ առաջ է թռչում:

Պերինան ճշում է, փչում է փողը,

որքան կարող է, բայց քսոմին և առաջ սլացող վագոնները խեղզում են փողի ձայնը:

Գնացքը հետզհետէ մօտենում է:

Մոռանալով ամեն ինչ՝ Պերինան դժի վրայով առաջ է վաղում, արդէն մի քանի տասնեակ քայլ է մնացել, որ շոգեգնացքը նրան հասնէ. մի փոքը յետոյ լսում է ինչ որ պատահական թրըիկոց. այնուհետև էլ ոչինչ չի տեսնում ու լսում և ուժասպառ ընկնում է գետին:

Պերինայի մայրը, որը վաղում էր նրա ետևից, մօտեցաւ և հողաթմբի վրայ, շոգեգնացքի կողքին վայր ընկած իր աղջկանը վեր բարձրացրեց:

— Խելագարուել ես: Դու հրաշքով ազատուեցիր մահուանից:

Լալիս էր մայրը և յանդիմանում նրան:

Երբ Պերինան ուշքի եկաւ, ամենից առաջ տեսաւ կանգնած գնացքը: Ուշքեմն անդունդը չի ընկել:

Նա ուրախութիւնից լալիս էր ու ծիծաղում:

Գնացքից արդէն իջել էին թէ ծառայողները և թէ ճանապարհորդներից մի քանիսը իմանալու համար, թէ ինչ է պատահել:

— Ես մի փոքը հեռուից յանկարծ տեսայ մի սե ստուեր և կարմիր լապտեր, բացատրում էր ճանապարհորդներին մեքենավարը, — հազիւ կարողացայ կանգնեցնել գնացքը. Քիչ մնաց ցած ընկնէինք, կամուրջը փլել է: Ահա այս աղջիկն է մեզ ազատել:

Ճանապարհորդներից մի քանիսը մօտեցան և սարսափով նայում էին այն անդունդի բերանին, ուր քիչ էր մնացել իրենք ընկնէին: Յետոյ շրջապատեցին բոլորին մահուանից աղատող աղջկանը:

Իսկ Պերինայի մայրը գեռ շարունակում էր իր նախատինքները:

— Զէ՞ որ կեանքդ մազից էր կախուած. ինչ պիտի անէի առանց քեզ: Ա՛ի, դու խելագանը ես, խելագանը:

Ճանապարհորդների թւում գտնում էր մի անգլուհի տիկին:

— Այս ինչ կոպիտ կին է, ասաց նա. — Ինչու է յանդիմանում երեխային: Գնանք ինձ հետ, աղջիկս, ես հարուստ եմ. քեզ համար իմ տանը լաւ կը լինի, ոչ ոք չի համարձակուիլ քո վերայ բարկանալ. ես կը նայեմ քեզ աղջկանս պէս: Թողէք նրան ինձ հետ, ես ձեզ փող կը տամ: Այսպէս վերջացրեց անգլուհին դիմելով մօրը, որը վախից զեռ չէր սթափուել և չէր հասկանում անգլուհու ասածները:

Պերինան հասկացաւ առաջարկի միտքը և մօր վզից փաթաթուելով՝ բացականչեց:

— Ո՛չ, ես չեմ գայ, ես կը մնամ մայրիկիս մօս: Այստեղ մեզ համար շատ լաւ է:

Այդ միջոցին մի պարոն ճանապարհորդներին հետևեալն առաջարկեց.

— Ուելի լաւ է հանգանակութիւն հաւաքենք այս խեղճերի համար. ասաց և ինքը գրանից հարիւր լիր հանեց:

Միւսներն էլ սկսեցին նուիրել, ով որքան կարող էր:

— Ո՛չ, մեզ փող հարկաւոր չէ, ասաց Պերինան, — մենք նրա համար ենք նշանակուած այստեղ, որ հսկենք ճանապարհի վրայ, իսկ եթէ ուզում էր մեզ բարութիւն անել, յայտնեցէք երկաթուղու գծի կառավարութեան, որ մենք լաւ ենք կատարում մեր պարտականութիւնները և մեր տեղը ուրիշ տղամարդ չ'ուղարկեն: Խնդրեցէք, որ մեզ թողնեն այստեղ:

— Լաւ, ես կը խօսեմ այդ մասին, — ասաց ճարտարապետի հագուստով մի պարոն, — յուսով եմ, ձեզ այժմ կը թողնեն այստեղ. բայց և այնպէս փողը վերցրէք, դուք կարող էք տուն շինել ձեզ համար, եթէ կառավարութիւնը ձեզ չի վստահանալ այսպիսի պատասխանատու պահակատեղը: Գուցէ և ձեզ տեղափոխեն մի՛ուրիշ տեղ, որի հսկողութիւնը աւելի հեշտ է:

Այդ ժամանակ ճանապարհորդներին անգունդի միւս կողմը տեղափո-



իսելու համար պատռիուած սայլելը  
մօտեցան գնազքին։

Բոլորը մնաս բարեւ ասացին Պերինախին. շատերը համբուրում էին նրան և մի որեւէ բան ընծայում:

— Որքան ուրախ եմ, ասաց Պետքինան մօրը, երբ վերադարձել էին տուն,—այժմ, մայրիկ, երեխ մեղ կը թողնեն մնալ մեր սիրելի անակում:

— Փառք քեզ, Աստուած, պատասխանեց մայրը երեսը խաչակինքելով.—Ներիր, որ յանդիմանեցի քեզ. Ես գլուխս բոլորովին կորցրի, երբ տեսայ քեզ գնացքի մօտ վայր ընկած. իմ սիրելի, իմ թանկաղին, իմ բարի տղջիկս:

Նա ուժեղ զրկեց աղջկան:  
— Միթէ, մայրիկ, ես չը զիաեմ,  
թէ դու որքան ես սիրում ինձ: Ոյն  
տիկինը ուզում էր, որ ես հետը գնայի:  
Նրեի խելքը գլխին չէր:

Շնորհիւ նկարագրուած այս դէպքի, Պերինան, իբ մայրը և եղբայրը

գեռ երկար, շատ երկար տարիներ  
կարողացան բախտաւոր և հանգիստ  
ապրել իրենց նախկին սիրելի տնա-  
կում:



2134

84

1

61,

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
РАСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

